



ՈՉ-ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱՆ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՂԻ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արամեամեր՝ եւ. Թ. ՍԱՐԵՅԱՆ —:— Propr. Rev. K. T. SARIAN

Բ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1940

ԹԻԻ 4



Վերստանալ Հայրապետներէն Պողիկարպոս
(Տես 55րդ էջի յօդուածը)

Աւետարանչական մեծ շարժում Դէյուքի մէջ.— Պէյուքին մեզի կը տեղեկացնեն՝ թէ հասկանում եմ քիչ քիչ և օտար Աւետարանական հասկացիւններու դեկալար դեմքերը, առաջնորդուած Աստուծոյ Հոգիին, վերջերս գովելի ձեւերով մը ունեցած են: Սոյն ձեւերով աւետարանչական է, կէս նպաստ ունենալով Աւետարանին տարածուելու Պէյուքի անկէ կողմ, մասնաւոր խաղաղութիւն անհետ մնացած մասերուն մէջ, ուր տակաւին մեղքը գերիշխում է: Այդ նպատակով կազմուած է վեց յարանաւանութեանց հայ եւ օտար ներկայացուցիչներէն բաղկացեալ յանձնախումբ մը: Սոյն յանձնախումբին որոշման վրայ տարբեր ժողովարաններու մէջ ժողովներ տարածուած են, իրարու հետ բաներու փոխանակութիւններ ունեցած են: Տերոյր Հոգիին գործունէութիւնը մեծապէս զգալի եղած է քաղաքներու, վիլայէթներու եւ մասնաւոր ջերմեանց աղօթքներու մէջ: Ժողովները կը կատարուին արարեալ, անգլիներէ, հայերէ եւ սանկներէ լեզուներով:

Հոգեւոր գործիչներու այս համագործակցութենէն (միասին աղօթել եւ աշխատել) ժողովուրդն ալ շատ քիչ քիչ տեսնուած է: Աստուծոյ դասը ո՛րքան վնաս քաշած է եկեղեցիներու անհասկացիւններէն, գիտար դասաւանդելէն: Մենք վստահ ենք որ, գործիչներուն ցոյց տուած այս համերաշխութենէն ստանալապէս Տէրը կը փառաւորուի: Ան պիտի դնէ իր կնիքը այս օրհնեալ գործակցութեան: Երանի թէ անկէ տեղ հետեւուող սոյն գեղեցիկ օրինակին:

* * *

Ամերիկայի մէջ կը միանան.— Ահա թէ ի՞նչ կը գրէ Ամերիկայի «Փրիւքիւն» թերթը իր Հոկտեմբերի.— Դեկտեմբերի մէջ.— «Սոյն փայտուն եւ օրհ-

նաբեր ժողովներու մէջ (կ'ակնարկէ միութենական ժողովներուն որոնք տեղի ունեցած են Սեպտեմբերին մէջ, Պոսթոն) Իրեզոնի Հայ Աւետարանական Ոչ-Յարանաւանական Եկեղեցիին միջոցաւ եղբայրութեան զանգուածին (ընդգծուելու մեր կողմէ), հաւել «Փրիւքիւն» եւ «Երեւան» թերթերը պաշտօնապէս ընդունուած են իր պաշտօնական թերթը Ամերիկահայ Հոգ. Միաց. եղբայրութեան: Սոյն երկու որոշումները՝ Միութիւնը ներկայացնող ներկաներուն միաձայն հաւանութեամբ (առանց բացառութեան բոլորն ալ ձեռնգրելէ վեր վերցնելով) վաւերացուեցան:

Ամերիկայի մեր եղբայրներուն կողմէ անուամբ այս կարեւոր քայլը պիտի չեն անկիստ անցնուի մեր կողմէ: Կը գտնուի զայն շատ մը տեսակետներէ նշանակալից եւ տրամաբանական ալ: Միզի կը մնայ միայն իրենց հետ ուրախակցել ըլլալ, եւ մաղթել՝ որ նման ձուլումներ շատ մը տեղեր իրականութիւն դառնան յոգեւոր Տէրոյր գործին եւ ի փառս Աստուծոյ: Կէս մը տակաւ, անհնար չանցաւ, ան ալ ա՛հ՝ թէ եղբայրութեան վերջնականութենէն ետք. Գեորգ Զիզլեհեանին անունը չյիշուիր ալ տարի, իր փառաւորութեան մը: Եստեմանի դիպ, կը մաղթենք յաջողութիւն:

* * *

Սուրբոյ՝ Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութենական ժողովը պիտի սկսի Ապրիլ 3-ին եւ պիտի տեղի ունեցի 8 Ապրիլ: Կը յուսանք թէ եզրափակուի պիտի ունենայ իր միջին աւելի պատմութիւնները սոյն համագործակցութեան: Անհնար պատճառներով եւ աղօթել անոր օգտակարութեան համար:

* * *

Մեր շնորհաւորութիւնները Պր. Բ. Կեօքլուպիօյի ֆանին յաջողած ըլլալուն համար վերհրատարակել 7 տարի ի վեր ընդհատուած «Հրեղին Սիւն» ամսաթերթը: Զաջողութիւն:

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՉԱՅՆ

ՈՉ-ՑԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱԼ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

AVEDARANI TSAIN

AN ARMENIAN RELIGIOUS MONTHLY

Արմոնատեր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ —:— Propr. Rev. K. T. SARIAN

Խմբագիրներ՝

Վ. Ե. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Վ. Ե. Թ. ԷՌՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

Պ. Կ. Ե. ԹԱՌՄԱՆԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1940

ԹԻԻ 4

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի յարութիւնը՝ քրիստոնէութեան անկեան ֆաւր կոչուած է: Առանց անոր՝ Քրիստոսի կեանքն ու գործունէութիւնը, եւ մահն ու քաղումը սարսափելի եւ իսկուր ողբերգութիւն մը պիտի ըլլային: Սակայն Քրիստոս ինչ որ կատարած էր իր կեանքովն ու մահովը՝ ամբողջացուց եւ կեփեց իր յարութեամբը: Իսկապէս յարուցեալ եւ կենդանի Քրիստոս մը միայն կրնար մարդկութեան Փրկիչ ըլլալ, եւ հետեւաբար քրիստոնէութիւնը գոյացաւ Անոր յարութեամբը:

Դարերէ ի վեր մարդիկ ջանացած են հերքելու պատմական այս մեծ եղելութիւնը: Ոմանք կասկածներ յարուցած են Անոր պատմականութեան վրայ, ոմանք կոչած են զայն *հոգիի յարութիւն* եւ ոչ թէ մարմինի: Հակառակ անոնց բիւր յարձակումներուն յարութեան ճշմարտութիւնը տակաւին կը մնայ աննուան: Յարութիւնը վճռապէս կարելի է միմիայն մարմնով: *Հոգիի յարութիւն* բռնուած բանը՝ Աստուածաշունչին մէջ գոյութիւն չունի երբեք, եւ առողջ մտքին՝ ամբողջովին ծիծաղելի եւ անհրաժեշտական է: Յիսուս յարութիւն առնելէ յետոյ երեւցաւ իր աշակերտներուն, կերաւ եւ խօսակցեցաւ անոնց հետ, թոյլատրեց զանոնք որ շօտափեն զինքը: Աշակերտները Անոր յարութեան մասին այնքան համոզուած էին որ, կարելի չէր որ եւ է կերպով մը տարակուսէին այս եղելութեան վրայ: Անոնք խաբուած ալ չէին կրնար ըլլալ, ինչու որ, կը վկայէին այն բաները՝ զորոնք տեսած էին իրենց աչքերովը եւ շօտափած էին իրենց ձեռներովը: Չենք կրնար երեւակայել թէ՛ անոնք Քրիստոսը տեսած ձեւացնելով՝ կը ջանային խաբել մարդիկ, ինչու որ, այս կերպով իրենց վրայ հասցուցած էին ասելութիւն, հալածանք, եւ նոյնիսկ մահուայ սպառնալիքներ:

Պօղոս, մեծ Առաքեալը, Ա. Կորն. 15րդ գլխուն մէջ կը հաստատէ եւ ի յայտ կը բերէ Քրիստոսի յարութեան ստուգութիւնն ու իրականութիւնը, եւ կը ցուցնէ թէ՛ պատմութեան մէջ չկայ որ եւ է եղելութիւն մը որ ասոր պէս հաստատուած ըլլայ: Սոյն գլխուն մէջ՝ Պօղոս բոցանցոյլ մարգարիտի հասկններուն նման ի յայտ կը բերէ Քրիստոսի յարութեան բոլոր պատմական փաստերը:

Անիկա չի վախճար այս նիւթը իր բոլոր կողմերովը բնեղի: Մարտահրաւիր կը կարդայ զայն հերքելու ջանացողներուն, կը պաշտպանէ իր դիրքը Աստուծային յայտնութեամբ՝ կը փնացնէ անոնց պատճառաբանութիւնները: Պօղոս շատ յստակ տեսած էր յարութեան իրողութիւնն ու անոր եղբիւնը, եւ խորապէս հասկցած էր անոր գործնական կիրառութիւնը:

Պօղոս ձեռք կ'առնէ յարութեան եղելութիւնը, նախ անոր իրականութիւնը վկայողներուն ցանկը կու տայ, եւ կը ցուցնէ անոնց միաբանութիւնը այս եղելութեան շուրջ, ու իր խօսքը դարձնելով անոնց՝ որոնք կ'ըսէին քէ յարութիւն չկայ, ուրեմն Քրիստոս յարութիւն առած չէ, ուստի «եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն մեր ֆարգութիւնը պարապ է»: Կորնթոսի եկեղեցին լաջ գիտէր որ, ամեն անգամ որ Պօղոս կ'այցելէր զիրենք, կը ֆարգէր անոնց խաչեալ եւ յարուցեալ Քրիստոսը: Ուստի անոնք կ'ընային հետեւցնել քէ՝ եթէ Քրիստոս յարութիւն առած չէր, Պօղոսի բոլոր ֆարգութիւնները դատարկ եւ անհիմն են, նոյնպէս միւս բոլոր առաքեալներունը, ահա այս կերպով անոնք ունկնդրած եւ հաւատացած կ'ըլլային պարապ ֆարգութիւններու: Պարապ բանի վրայ հաստատուած հաւատքը ոչնչութիւն է: Պօղոս ինքը կ'եզրակացնէ իր խօսքերը ուղղելով Կորնթոսի հաւատացեալներուն՝ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ՝ ոչ քէ միայն մեր ֆարգութիւնը պարապ է, հասկած էր հաւատքն ալ ունայն եւ անարժէք է: Ուստի կ'ընդունին քէ՝ Պօղոսին համար յարութիւնը լոկ տեսիլ մը եւ կամ զգայախաբութիւն մըն էր: Յայտնի է որ, ան երբեք չի տարակուսեցաւ յարուցեալ Քրիստոսի երեւման առարկայական իրականութեան վրայ: Պօղոսի տրամաբանութենէն փախուտ տալ կարելի չէ: Ան ուրիշ եզրակացութեան մըն ալ կը տանի զանոնք ըսելով քէ՝ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ոչ քէ միայն ձեր հաւատքը պարապ ու անհիմն է, հապա դուք դեռ ձեր մեղքներուն մէջ եք, ինչու որ, պարապ հաւատքը պտուղ արտադրելու կարողութիւն չունենալով՝ չի կրնար փրկել: Իսկ ուրիշ բան մը, եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն ի՞նչ պիտի ըլլայ մեզմէ զատուող մեր սիրելիներուն վիճակը՝ որոնք յարութեան փառաւոր յոյսովը ննջեցին: Եթէ այն խոստումները՝ որոնց իրենք հաւատացին նշմարիտ չեն, չի վարսելոյնք ըսելու քէ՝ անոնք անգութքէն խաբուած ըլլալով՝ կորսուած են յաւիտեան: Հապա մենք որ հոս տառապանաց աշխարհին մէջ կ'ապրինք, հրաժարու՞մք մեզ աշխարհէ, եւ ամեն կերպ կորուստ յանձն առած ենք, ամեն բանէ կը զրկուլոյնք — ոչնչի՞ համար: Եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն, «բոլոր մարդոցմէ աւելի խղճալի ենք», եւ սոս Էն մեր բոլոր յոյսերը:

Պօղոս՝ Քրիստոսի յարութեան եղելութիւնը իր անվիճելի փաստերովը ի յայտ բերելէն յետոյ, կը բացագանչէ. «Բայց հիմա Քրիստոս մեռելներէն յարութիւն առած է, ննջեցեալներուն առաջին պտուղը»: Ուստի քանի որ Քրիստոս կենդանի է, մենք ալ պիտի ապրինք յաւիտեան: Յաղթանակը տարուած է մահուան ու զերեզմանին վրայ: «Մահը յաղթութեան մէջ ընկզմեցաւ, ո՞ր է ոյ մահ քու խաչքոցդ, ո՞ր է ոյ զերեզման քու յաղթութիւնդ»: Ուստի, եկեք ո՛վ հաւատացեալներ, գոչենք միասին «Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի, որ մեզ միանգամ ընդ միշտ ազատեց մահուան ու զերեզմանին սարսափէն, եւ բացաւ մեզի արքայութեան ազամանդեայ դռները:

ՎԵՐ. ԹԷՌՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

ԻՐ ՁԵՌՔԵՐԸ ԱՆՈՆՑ ՖՈՒՑՈՒՅ

Իր ձեռքերը . . .

Յիսուս մեռելներէն փառաւորապէս յարութիւն առնելէն ետքը Իր աշակերտներուն երեւցաւ ցուցելով անոնց Իր ձեռքերը, ոտքերն ու կողը որոնք ծակուած էին Գողգոթայի խաչին վրայ: Իր այս վէրքերը որոնցմով մենք բժշկուեցանք պիտի մնան իբր նշան գալիք յաւիտենական բոլոր դարերուն մէջ:

Ո՛հ Անոր ձեռքերը, անմեղ և յաւիտենական ձեռքեր՝ որոնցմով տարածեց երկինքն ու երկիրը, տեսանելի և անտեսանելի բոլոր տիեզերքը որոնք Իր փառքը կը պատմեն՝ թէ մենք Անոր ձեռքերուն գործն ենք, աստղեր, մոլորակներ և իրենց արբանեակները, աստղեր որոնք միլիոնաւոր աշխարհներ կը կազմեն, Անով և Անոր համար ստեղծուեցան (Կող. 1. 16): Սակայն այս Իր բոլոր փառքն ու զօրութիւնը պահ մը մէկ կողմ դնելով, Իր անձը ունայնացուց, ծառայի կերպարանք առաւ և այս աշխարհ գալու սիրով հաճեցաւ, մէկ և մեծ ու յաւիտենական նպատակի մը համար, այսինքն՝ Իր կեանքը իբր փրկանք տալու մեր մեղքերուն համար, և ահա Իր խաչը շաղկապէ Գողգոթայի կ'ելլէ խաչուելու, «մինչև Գողգոթայ գնաց ինծի համար»: Հոն տարածուեցան Իր յաւիտենական բարազուկները գամուելով խաչին վրայ: Ո՛հ, մարդկային սիրտը ինչպէ՞ս կըրնայ դիմանալ, չի հալիր, չի փշրուիր այս աստուածային անհուն սիրոյ առջեւ: Կոնգ ա՛ն լապէ մը սիրելի բարեկամս, հարուստ կամ ողքատ, ուսեալ կամ տգէտ, Գողգոթայի այս տեսարանին առջեւ. ահա տաճարին վա-

րագոյրը վերէն վար երկուքի կը ճեղքուի, երկիր շարժեցաւ, և քարերը պատուեցան ու գերեզմանները բացուեցան, ու շատ մը սուրբ ննջեցեալներու մարմիններ յարութիւն առին, և երեք ժամ բոլոր աշխարհի վրայ խաւար եղաւ իբր նշան՝ թէ բնութիւնն անգամ այս տեսարանէն ազդուած սուգ կը բռնէ: Կը պատմուի թէ երբ երեք ժամ արեւը խաւարեցաւ, նոյն ժամանակ ուրիշ մէկ երկրի մը մէջ տպւորդ գիտուն մը կար, երբոր այս խաւարը տեղի ունեցաւ ցորեկ ատեն, սարսափահար կը բացագանչէ. «Կամ աշխարհ կը կործանի և կամ Արարիչը մեծ տաճարայի մը մէջ է»: Այո՛, այս վերջինն էր. Արարիչն էր՝ որ ցաւ կը քաշէր բոլոր մարդկութեան ցեղին մեղքին համար, Աստուծոյ Գառը կը զոհուէր Գողգոթայի վրայ:

Առաջին.— Ան Իր ձեռքերը կը գուցնէ այսօր ալ բոլոր անապաշխար հոգիներուն: Սիրելի ընթերցող, ով ճամբորդ բարեկամս, արդեօք հոգ չես ըներ քու անմահ հոգիիդ մասին. նայէ, Անոր անմեղ ձեռքերուն որոնք քեզի երկնցած են ցուցնելու համար ըսելով թէ «այս վերքերը քեզի համար կրած են, ո՛հ եկուր իմ պաշտպանութեանս ներքեւ, ես չեմ արհամարհեր, չեմ մերժեր, այլ կը սիրեմ քեզ ու կը խնայեմ քու կեանքդ, կը փրկեմ ու կը պահեմ քեզ իմ բարեկենսութեան մէջ, մինչև յաւիտենական օրը»:

«Երբ այն խաչին ես կը նայիմ,
Ուր որ մեռաւ փառաց Տէրն իմ,
Ասանկ Տէրոջ անհուն սիրոյն
Արժան ե տա՛լ իմ կեանքս ողջոյն»:

Երկրորդ.— Ան իր ձեռքերը կը ցուցնէ իր բոլոր զաւակներուն՝ ըսելով.

ա) «Դուք զաւակներս, իմ ձեռքերու մէջ փորագրուած էք, իմ առջեւ խիստ պատուական էք, դուք որ զիս ընտրած էք իբր ձեր յաւիտենական բաժինը, ես ձեզ իմ աչքիս բերին պէս կը պահեմ, երբ կը նայիմ իմ ձեռքերուս և վէրքերուս մօտն օր ձեզ կը յիշեմ իմ Հօրս առջև», բիւր փառք ըլլայ սիրելի Փրկչին:

բ) Թէ՛ «Իմ ձեռքէս և իմ Հօրս ձեռքէն ոչ ոք կրնայ ձեզ յափշտակել».

Ո՛հ, ինչ օրհնեալ խորհուրդ և վստահութիւն, թէ մենք Սբ. Երրորդութեան մօտենակարող ձեռքերուն մէջ ապանով պաշտպանուած ենք, ոչ մէկ ոյժ, ըլլայ երկինքի մէջ, ըլլայ երկրի վրայ չի պիտի կրնայ մեզ խել Անոր ձեռքերէն և բազուկներէն. «Դժոխքին դռները զանիկա պիտի չի յաղթեն» (Մատթ. 16. 19) Հալէլուիա: Շատ հաւանական է, Ան իր իսկ ձեռքերովը մեր անունները կենաց գիրքին մէջ գրած է:

Երրորդ.— Ան իր ձեռքերը կը ցուցնէ իր պաշտօնեաներուն:


«Անիկա որ իր աջ ձեռքին մէջ եօթը աստղերը ունի» (Յայտ. 2. 1).

Ով սիրելի գործակիցներ, գիտակից ըլլանք մեր Սբ. Կոչումին և պատասխանատուութեանը: Ան իր ձեռքերուն մէջ կը բռնէ մեզ վկայելու համար Սբ. Հոգոյն զօրութեամբը իր ձրի փրկութիւնը, քաւչարար մահը, յարութիւնը և մօտայուտ փառաւոր երկրորդ գալուստը: Անոր հզօր ձեռքերուն տակ խոնարհ և հաւատարիմ մնանք, որպէսզի երբ ինք յայտնուի չամչնանք, ալ մեր պաշտօնը ուրախութեամբ կատարած ըլլալով համարձակութեամբ ելլենք և կայնինք

իր աստեանին առջեւ և կարող ըլլանք ըսելու. «Տէր, հինգ տաղանդ յանձնեցիր ինծի, ահա հինգ տաղանդ ալ տնոնց վրայ շահեցայ» (Մատթ. 25. 20):

«Ահա ես ու այն զաւակները զորոնք Աստուած ինծի տուաւ» (Եբր. 2. 13):

Կ. Յ. ԹՈՒՄԱՆԱՆ



ԱՊՏԱԿԻ ՄԸ ԱՐԴԻՒՆՔԸ

Հոգեւորական մը իր ժողովուրդէն նպաստ կը հաւաքէր հեղեղէն վնասուողներուն համար: Դժուար քայլ մը առնել որոշեց, ահ էր բարկացող հարուստի մը դիմել և անկէ դրամ ուզել: Պահ մը սպասելէն ետքը ըսպտաման սենեակին մէջ ընդունուեցաւ ներս: Ան յայտնեց իր հոմիստ խընդրուածքը, սակայն հարուստը սառնօրէն մերժեց իր խնդրանքը: Հոգեւոր պաշտօնեան սկսաւ սիրով և խոնարհ հոգիով մը սակայն ճարտար լիզուով նկարագրել խեղճ աղէտեալներու թշուառ և անտանելի վիճակը, որուն ի պատասխան ստացաւ չորտալիւն ապտակ մը: Ասոր վրան Աստուծոյ ծառան հանդարտօրէն ըսաւ, «Անիկա ինծի համար է, իսկ ի՞նչ պիտի տաք իմ աղէտեալներուս»: Այս պատասխանը կայծակի մը ներգործութիւնը ըրաւ: Հարուստը առաւ առատ դրամ և մօթահար՝ ներում խնդրեց պաշտօնեայէն:

— Եթէ մեր խօսքեր պիտի ազդեն մարդոց վրայ, մեր կեանքը պէտք է համոզէ զանոնք մեր անկեղծութեան վրայ:

ԿԱԼԼԵՍԻ ՀՈԳԵՒՈՐ ՄԵԾ ՀԱՐԺՈՒՄԸ

(Շարունակութիւնն նախորդ քիւէն եւ վերջ)

Նրկորդ. — Երբոր հարցնենք թէ Տէրը ի՞նչ միջոց գործածեց այդ զօրաւոր արթնութեան ժամանակ, նախ ըսենք՝ որ այդ շարժումին մէջ մարդիկ և մարդկային գործեր բոլորովին ետ կը մնան: «Զօրութեամբ չէ, և ուժով չէ, հապա իմ Հոգւովս, կ'ըսէ զօրաց Տէրը» (Զաք. 4. 6): Սոյն խոստումը կատարուած է նաեւ այնտեղ: Ասիկա լոկ Սբ. Հոգւոյն գործն է, որ կը փչէ ուր որ կ'ուզէ (Յովհ. 3. 8): Այսուամենայնիւ բոլոր շարժման մէջ կը յիշուի երիտասարդ հանքագործի մը անունը, ինչպէս վերը յիշեցինք, կը կոչուի Իվան Բօպըրթը, և կը թուի՝ թէ Սուրբ Հոգին մասնաւոր կերպով պատրաստեւ էր այդ ռամիկ երիտասարդը: Նկատողութեան արժանի է, որ Հոգւոյն մկրտութիւնը զոր Իվան Բօպըրթը հրաշալի կերպով ունեցած էր, զինքը փոխած էր չափազանց խոնարհ մարդու մը: Ան ժողովներու մէջ բոլորովին անյայտ կը մնար, և մեծապէս հոգ կը տանէր որ իր անձը չբարձրացուի: Կ'ըսեն թէ, ան յատուկ բնական ընդունակութիւններ չունէր, բայց աղօթքի մարդ էր: Երբ ժողովի գար՝ իր դէմքին վրայ ընդհանրապէս կը տեսնուէր չափազանց լրջութիւն մը, բայց երբ խօսիլ ըսկէր, նոյն դէմքին վրայ կը փայլէր մեծ ուրախութիւն մը: Երբ խօսած ըլլար, այլեւս այնքան հոգ չունէր ուրիշ բանի մասին: Բայց պէտք էր տեսնել իր հոգւոյն մաքստումը Աստուծոյ հետ: Սօսելու տալիս մարդոց տառնձին մեղքերուն վրայ չէր խօսեր, բայց Յիսուսը կը մեծարէր և կը բարձրացնէր (Յովհ. 16. 14): Իրեն տրուած էր նաեւ Հոգւոյն կողմէ խուզարկու նայուածք մը: Ժողովի մը տ-

ան, աղօթքի զօրութիւնը չէր զգացուէր, երգեցողութիւնը անազգեցիկ էր, և այս պարագան ստիպեց Իվան Բօպըրթը ընդհատելու ժողովը և մատնանիչ ընելու թէ ժողովին վրայ Աստուծոյ ահաճութիւնը կայ, որովհետեւ ժողովին մէջ իրարու հետ խռով մարդիկ կան: Եւ ինքը արտասուալից կ'աղօթէր և Աստուծոյ հետ կը մարտնչէր այն անձերուն համար որոնք անհայտ էին իրարու հետ, և ետքը բոլոր մարմնով դողալով և սրտի խորին յուզումով մը կ'աղաղակէ ըսելով, «Ո՛հ, կա՛մ հաշտուեցէ՛ք իրարու հետ, և կամ դուրս ելէ՛ք»: Այս կսչը կը փչրէ իրարու հետ խռոված հոգիները, անոնք կը հաշտուին և օրհնութիւնը կ'սկսի թափիլ ժողովին վրայ:

Արդարեւ Իվան Բօպըրթը Սուրբ Հոգւոյն ձեռքին մէջ խոնարհ մէկ գործիք մըն էր, և ասիկա կը հաստատեն այն յայտնութիւնները, որոնք տեղի կ'ունենային ժողովներու ժամանակ: Անգամ մը ան ոտքի կայնելով կ'ըսէ. «Հոս կայ մէկը որ կ'ընդդիմանայ Սբ. Հոգւոյն: Տէրը կ'ըսէ իրեն որ Աւետարանը տանի հեթանոսներուն, Ափրիկէ, բայց այդ քոյրը չյօժարիր երթալ»: Յետոյ ան կ'ըսէ թէ՝ ինչպէս Աստուծոյ մեզի պարգեւած է Իր լաւագոյնը — Իր Որդին, ամօթ է որ մենք տանք Անոր սա կա՛մ նա բանը և չյօժարինք սեղանին դնելու մեր ամենալաւը»: Այն տալիս ոտքի կ'ելլէ մանկամարդ կին մը, և արցունքներ իր այտերէն հոսելով կը խոստովանի որ Սբ. Հոգին հինգ տարիէ ի վեր կ'ըսէ իրեն երթալ հեթանոսներուն և անոնց Աւետարանը քարոզել, սակայն մինչեւ հիմա ինքը ընդդիմացած է այդ ձայ-

նին, որովհետեւ իրենները, իր հայրենիքը և յարմարութիւնները աւելի կը սիրէր քան Յիսուսը և իր կամքը՝ Այնտեղ կը նուիրէ ինքզինքը Տէրոջը և ջերմ արցունքներով թողութիւն կը խնդրէ Աստուծէ։ Ուրիշ առթիւ, ուրիշ մէկ ժողովին, երգեցողութենէն ետքը իվան Բոլշերթով օտքի կ'ելլէ և դողալով կ'ըսէ. «Ես հիմա Հոգիէն պատգամ մը ստացայ, հոս մարդ մը կայ եկեղեցիներէն մէկուն պատկանող, որ ան Աստուծոյ Հոգիին հետ խաղացեր է, անհնազանդ գտնուած է Անոր, ծաղրեր է զԱյն, անոր համար այլեւս փրկութիւն չկայ։ Ան կորսուած է» (Դուկ. 12. 10)։

Ասոր վրայ, ժողովին մէջ տեղի ունեցածը պատմել անկարելի է։ Ամէնքը կ'սկսին աղաղակել շնորհքի համար։ Բոլշերթով կ'աղաղակէր. «Ով Տէր, փոխէ՛ որոշումդ»։ Ան չառ կ'աղօթէ, յետոյ վեր ելլելով կ'ըսէ. «Աստուած չուզեր աղօթքը լսել, Հոգին չձգեր որ ես չարուսակեմ։ Ուշ է, ուշ է»։ Պատմողը կ'ըսէ. «Մինչեւ այսօր այն խօսքը սարսափելի կերպով կը հնչէ ականջիս»։ Մարդ մը կը բացագանչէ. «զղջացող մեղաւորին համար ուշ չէ»։ Բոլշերթով վեր կը կայնի ու կ'ըսէ. «սակայն և այնպէս ուշ է»։ Կը կարծեմ թէ այդ ժողովին մէջ չկար մէկը որ չարատեսէր։

Երբորդ.— Ի՞նչ պարտականութիւն կը դնէ մեր վրայ Աստուծոյ կատարած այդ գործը։ Անգլիոյն, ո'ւր յաճախ տեղի կ'ունենան այդպիսի հոգեւոր շարժումներ, քաղաքակրթեալ երկիրներու մէջ առաջին տեղը կը գրաւէ։ Սակայն լսենք, թէ Տոբթ. Թօրի ի՞նչ կ'ըսէ իր գրութիւններէն մէկուն մէջ.— «Մեզի պէտք է վերականգնուածութիւն, Սբ. Հոգւոյն ապաւորիչ ընդհանուր մէկ արթնութիւնը։ Կա՛մ այն է՝ որ այսպիսի ընդհանուր

վերականգնութիւն մը տեղի պիտի ունենայ, կամ թէ պիտի լուծուի եկեղեցին, ընտանիքը, պետութիւնը, այո՛ մինչեւ անգամ մեր երկիրը։ Միակ դարմանը՝ արթնութիւնն է, նոր կեանքը Աստուածուստ։ Ասիկա միայն կարող է անբարոյականութեան և անհաւատութեան սարսափելի հոսանքին առաջք առնելու, այո, միայն Սուրբ Հոգւոյն հեղումը պէտք է դնէ զնելուաշխարհի ապականութեան։ Աստուծոյ կողմէ զրկուած արթնութիւնը կրնայ ընել ասիկա։ Մենք ի՞նչ կրնանք ընել ասոր համար. աղօթել, աղօթել եզեկիւնի պէս, որ կ'ըսէ. «Ով շունչ, չորս հովերէն եկ'ուր ու այս սպաննուածներուն վրայ փչէ՛՝ որպէսզի կենդանանան»։

Հիմա խնդիրը մօտեցնենք մեզի։ Ի՞նչ պարտականութիւն կը դնէ մեր վրայ Աստուծոյ կատարած այս հրաշալի գործերը՝ զանազան երկիրներու մէջ, և ի՞նչ պայմաններու տակ Տէրը մեզի ալ կու տայ այդ օրհնութիւնը։ Մենք կը սիրենք մեր երկիրը և անոր բարիքը կ'ուզենք։ Մենք կը տեսնենք մեր երկրին ցաւերը, կը տեսնենք մեղքի հոսանքը որ կը լսփէ զայն, արդէն տեսանք թէ ի՞նչ կերպով անոր առաջքը կ'առնուի։ Արդ, ուրիշներուն փորձառութիւններէն օգտուելով, ունայն միջոցներու չգիմենք։ Հոգեւոր արթնութիւններու պատմութիւնները կարդալով, կու գանք այն համոզման՝ թէ ասոնք պըտուղն են յարատեւ աղօթքներու։ Չենք ուզեր աղօթել, աղօթել, աղօթել, մինչեւ որ Հոգին գոյ և յարութիւն տայ մեր ժողովուրդին ալ։ Այո, Տէրը մեր հայ ազգն ալ արթնցնէ մեզքի քունէն։ Այստեղ, այնտեղ երեւցող կայծերը Ան բոցերու վերածէ, որ չուտով այդ պայծառ կրակը վառէ մեր երկիրն ալ։

«Բարի Լուր»

ՊՕՂԻԿԱՐՊՈՍ

(Շար. ճախորդ թիւէն եւ վերջ)

Կառավարիչը յորդորեց որ ատիկա ընէ ժողովուրդին: «Կը նախընտրեմ ձեզի ուղղել խօսքերս, ըսաւ Պօղիկարպոս, որովհետեւ մեր կրօնքը կը պահանջէ Աստուծոյ կողմէ որոշուած իշխանութիւններուն և իշխաններուն պէտք եղած պատիւը ընծայել եթէ ան հակառակ չէ կրօնքին: Գալով ժողովուրդին սորվեցնելու խնդրոյն, տնոնք յարմար դատաւորներ չեն, որոնց առջեւ պիտի տրուի հաւատարիս պատճառաբանութիւնները»:

Կառավարիչը սկսաւ փորձել ըստպատիւութիւնները: Եթէ չապաշխարես, ձեռքիս տակ վայրի գազաններ ունիմ որոնց առջեւ պիտի նետեմ քեզ:

Պօղիկարպոս. — Բե՛ր զանոնք, որովհետեւ մեզի համար ապաշխարութիւնը լաւագոյնէն յոռեգոյնին անկարելի է: Մէկը պէտք է դառնայ գէշէն դէպի աղէկը:

Կառավարիչը. — Եթէ զղջում չյայտնես, քեզ պիտի այրեմ խարոյկի վրայ քանի որ կ'արհամարհես գազանները:

Պօղիկարպոս. — Դուն կ'սպառնաս կրակով որ քիչ մը տատն կ'այրէ և ետքը կը մարի, որովհետեւ բան չես գիտեր գալիք յաւիտեանական կրակի և պատիժի մասին՝ որ պահուած է ամբարիշտներուն համար: Ինչո՞ւ սակայն, կը կենտա, բե՛ր ի՛նչ որ կ'ուզես քերել:

Իր անվախութիւնն ու մարտիրոսանալու համար յայտնած եռանդը կառավարիչը զարմանքի մատնեց: Մոռնեալիկ մը զրկեց, ժողովուրդին մէջ տարածելու՝ թէ Պօղիկարպոս

ինքզինքը քրիստոնեայ կը դառնի, որուն վրայ խուժանը՝ բաղկացած հեթանոսներէ և հրեաներէ, բարձրադասակ կը խնդրէր անոր մահը՝ ըսելով. «Ասիկա է ան մարդը որ անպարկեշտութեան վարդապետ է, ան է քրիստոնեաներուն պարագլուխը, քահիչը մեր աստուածներուն: Ան է որ կը սորվեցնէ շատերուն չգոհել մեր աստուածներուն»։ Եւ այս խուժանը կը պահանջէր որ Պօղիկարպոսը առիւններուն տրուի: Սակայն կառավարիչը մերժեց ըսելով՝ թէ վայրի գազաններու զբօսանքի առեսը անցած է: Ասոր վրայ անոնք աղաղակելով պահանջեցին թէ այրուի: Կառավարիչը չհակառակելով այս պահանջին, վայրագ խուժանը անմիջապէս հաւաքեց փայտեր գործատեղիներէն և մօտակայ բաղնիքէն: Հրեաները աւելի աչքի կը զարնէին իրենց գործունէութեան մէջ քան հեթանոսները: Շուտով վառելիքի ահագին դէզ մը բարձրացաւ, և պատկառելին Պօղիկարպոս ամենայն եռանդով, մէկդի նետելով իր հանդերձը բարձրացաւ փայտերուն վրայ: Դահլիճներ կը պատրաստէին զինքը խարոյկին գամել, սակայն ան խընդրեց որ զինքը ազատ թողուն, ապահովցնելով զիրենք թէ Տէրը՝ որ կը պահէր զինքը, ուժ պիտի տար փնայու կրակներու մէջ առանց ընկրկումի: Յետոյ փոխանակ գամելու միայն իր ձեռքերը կապեցին: Ասոր վրայ նահատակը այժմ ճշմարտութեան համար ողջակէզի նման զոհուելու պատրաստ, աչքերը երկինք բարձրացուց՝ իր սիրտը թափեց Աստուծոյ առջեւ հետեւեալ աղօթքով. —

«Ով ամենակալ Տէր Աստուած, և Հայր յաւէտ սիրելի և օրհնեալ Որդի Յիսուս Քրիստոսի, որուն ձեռամբ ատացած ենք գիտութիւն Քու մօսիդ, կ'օրհնեմ Քեզ որովհետեւ բարեհաճե-

ցար բերել զիս այս օրուան ու ժաման, որպէսզի Քու սուրբ նահատակներուդ մէջ դասուիմ և անոնց բաժինը ընդունիմ, և խմեմ Քրիստոսի բաժակէն յաւիտենական կեանքի յարութեան համար թէ՛ մարմնոյ և թէ հոգւոյ, Սբ. Հոգւոյդ անապականութեան մէջ: Ծնորհէ որ անոնց չարքին մէջ մտնեմ այսօր, Քու աչքերուդ առջեւ գտնուած ըլլալով հաճելի և ընդունելի զոհի մը նման, նման անոր որ Դու ինքդ պատրաստեցիր . . . : Կը գովեմ Քեզ բոլոր ողորմութիւններուդ համար, կ'օրհնեմ ու կը փառաբանեմ Քեզ, յաւիտենական Քահանայապետ սիրելի Որդւոյդ Յիսուս Քրիստոսի անուանով: Անով Քեզի և Սուրբ Հոգւոյն փառք, այժմ և միշտ յաւիտեանս, Ամէն»:

Երբ այսպէս կ'աղօթէր ան, կրակը տարածուէր շուրջը: Սակայն իմեծ զարմացում հանդիսատեսներուն, կրակը երբեք իր մարմնոյն չէր զպեր, այլ կը շրջապատէր զինքը հովէն փչուած առագաստի նման (տես կողքի պատկերը): Մինչ եղբայրներուն, որոնք յուզեալ բարեպաշտութեամբ ժողովուրդին խստողած կը կենային, այնպէս երեւցաւ որ իր մարմինէն կը բխէր անուշ հոտ մը: Այս տեսին էր որ կառավարիչին հրամանով, աւելով մարմինը կը ծակեն, և դարձեալ ըստ քրիստոնեայ ականատեսներուն, այնքան առատ արիւն դուրս կ'ելլէ մարմինէն որ կարծես կրակը պիտի մորէր: Իսկ ուրիշներ կը կարծէին տեսնել աղաւնի մը, որ գէպի երկինք կը թռչէր, զոր նահատակին հոգին նկատեցին: Հրեաներ մեծ եռանդով ճշնշում բռնեցուցին կառավարիչին վրայ

որպէսզի իր մարմինը այրուի մինչեւ որ մոխրանայ անիկա, և արգիլել քրիստոնեաները թաղելէ զայն, չըլլայ թէ ըսին, Քրիստոսը ձգելով Պողիկարպոսը պաշտէն: «Քիչ կը խորհէին, կ'ըսէ պատմութեան հեղինակը, թէ ո՛րքան անկարելի էր մեզի թողուլ Քրիստոսը, որ մեռաւ բոլոր աշխարհի փրկութեան համար, և պաշտել ուրիշ մը: Մենք կը պաշտենք զԱյն որպէս Աստուծոյ Որդի, սակայն նահատակեալ քրիստոնեաներ, իբր աշակերտները և հետեւորդները մեր Տիրոջ, արժանի են մեր սիրոյն և յարգանքին, իրենց Վարդապետին և Թագաւորին հանդէպ տուած անգերազանցելի սիրոյն համար, որոնց հետ երանի թէ ըլլար մեր բաժինը, իբր աշակերտակիցներ անոնց և մասնաւորիցներ իր չարչարանքին»:

Պողիկարպոսի մարտիրոսացման օրերուն, ուրիշներ ալ նահատակուեցան միեւնոյն սրբազան դատին համար, սակայն մասնաւոր արձանագրութիւն մը պահուած չէ այդ մասին: Կը կարծուի թէ Պողիկարպոս հորիւր տարեկան էր երբ Քրիստոսի համար նահատակուեցաւ որ տեղի ունեցաւ 167 թուին: Այն քաղաքը ուր Պողիկարպոս վեհ վկայ մը եղաւ ճշմարտութեան, դեռ անհաւատներու գերիշխանութեան տակ է, սակայն իր յիշատակը կը մնայ անմոռաց: Եւ մինչեւ քրիստոնեաներու տեղահանումը այդ վայրէն, իր ուժերներուն գտնուած վայրը ծանօթ էր տեղւոյն քրիստոնեաներուն, և մեծապէս կը յարգուէր, և ուխտատեղի մը դարձած էր:

Թարգ. Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

ԴՈՒՆ ԵՐԲԷՆ Ի ՎԵՐ ՏԵՐՈՋՄԵՆ ԿԸ ՎԱԽՆԱՍ

«Ես եմ ծառադ եղայութեմէս
ի վեր Տէրոջմէն կը վախնամ»:
(Գ Թագ. 18. 12)

Ուրախութեամբ կ'ուզեմ վկայել
թէ, Աբդիայի այս պարզ, սակայն
ազգու վկայութիւնը մղեց զիս երե-
սանկ Տէրոջ առջև պաղատելու որ
տայ ինծի ալ այն աստուածավախու-
թիւնը, որ Սբ. Հոգին կարենայ իմ
մասիս ալ վկայել «Թէ Տէրոջմէն կը
վախնար» (Գ Թագ. 18. 3):

Քրիստոս Փրկչին համար եղած
կանխաձայնութեանց մէջ ի մէջ այլոց
գրուած է թէ, «Անիկա Տէրոջը վա-
խովը պիտի լեցուի» և «Տէրոջը վա-
խը Անոր գանձն է»:

Նպատակս «Տէրոջը վախին» վրայ
մասնաւոր աւտուստիւթիւն մը ը-
նել չէ, սակայն տեղ տեղ Սբ. Գրա-
կան մէջըրեւմեանով կ'ուզեմ չեչտել
թէ, «աստուածավախութիւնը» ունի
բնոյթ՝ ազնիւ նկարագիր չինելու,
մարդոց հանդէպ սրբազան քաջու-
թեամբ և սիրով լեցնելու, մղելու
մաքուր փորձառական կեանքի և գոր-
ծունէութեան:

Մարդիկ կը գործածեն «Աստու-
ծոյ վախը» երբ անիրաւ արարքներու
զոհ կ'ըլլան, իրոյ յանգիմանութիւն
անիրաւողին դէմ, ինչպէս խաչուող
չարագործներէն մէկը կը սաստէր իր
ընկերը (որ կը նախատէր Խաչեալ
Փրկիչը) ըսելով. «Դուն Աստուծոյ
չե՞ս վախնար»:

Միեւնոյն յանգիմանութիւնը սա-
րիներ տալով ուրիշ մէկն ալ ինծի
ուղղեց, երբ բարկութեան բոլորին
ուժգնութենէն ապաւակեր էի մէկ ընկերս:

Թող ընթերցողը ներէ ինծի ըսելու
միջանկեալ թէ ես ալ «որ տալով հայ-
նոյիչ էի ու հարածող և թշնամանող,
բայց ողորմութիւն գտայ, վասնզի ան-
հաւատութեան մէջ չգիտնալով ըրի»:

Մարդկային բոլոր գիտութիւն-
ներէ և իմաստութեանէ դարազանց է
«Տէրոջը վախը»: Ինչպէս որ գրուած
է Տէրոջը վախը իմաստութիւնը ինքն
է (Յոբ. 28. 28): Բայց այս վախը Սբ.
Հոգին մէկ շնորհքն է զոր կու տայ
մարդոց և անով կ'առաջնորդէ մար-
դիկը ճշմարիտ փրկութեան ու աստ-
ուածապաշտութեան (Գործք. 2. 37,
10. 1-5, 11. 13, 14, 16. 14, 15):

Ուրիշ չափ մը քրիստոնէական
առաքինութիւններու նման, աստուա-
ծավախութիւնն ալ կենաց դառն փոր-
ձառութեանց մէջ իր արմէքը ի յայտ
կը բերէ: Ունեցած ենք այսպիսի
փորձութեան չըջաններ: Թէ ոչ, պէտք
է մեզի ալ փորձութեան այդ անելա-
նելի Մօրիայի բարձրութեանը մոզ-
ցիլ, աննկարագրելի տաղանդներու
բովերէն անցնելով՝ չինել ողջակէզի
սեղան մը, մեր հոգեհատոր Խաչակ-
ներուն համար և զանոնք իսպառ այ-
րել որպէս նշան մեր աստուածավա-
խութեան և հապա այն տեղէն տռնել,
բուն Աստուծոյ բերնէն արտասան-
ուած աստուածավախութեան վկայա-
գիրը, երբ ան մեզի ալ ըսէ, ինչպէս
Աբրահամին ըսաւ, թէ՝ «Հիմա գիցցայ
որ Աստուծմէ կը վախնաս, որովհետեւ
եմ մէկ հասիկ որդիդ ինձմէ չխնայե-
ցիր» (Ծն. 22. 11, 12):

Ո՞վ կրնար տարակուսիլ Աբրա-
համին ատկէ տալով ունեցած աստուա-
ծավախութեան վրայ: Անոր կենաց
կայանները աստուածավախութեան և
հաւատքի անխորտակելի մարմարեայ
կոթողներով լեցուն է, բայց և այն-
պէս Աստուած յարմար տեսաւ որ Իր
այս ծառան, զօրաւոր փորձաքարի մըն,

ալ զորնէ, հապա զայն հուշակէ համայն աշխարհի ու երկնային դասուց՝ թէ «Աբրահամ Աստուծմէ կը վախնայ» :

Եթէ Դաւիթ պիտի իշխէր Իսրայէլի վրայ, պէտք ունէր Աստուծոյ վախին, Դաւիթ կ'ըսէ. «Իսրայէլի Աստուծոյ . . . ինծի խօսեցաւ ըսելով. Մարդոց վրայ իշխողը արդար ըլլայ ու Աստուծոյ վախովը իշխէ : Այն տանն անիկա տաւառեան լոյսին կը նմանի որ տառնոյ տմպի է, ու արեւի ճառագայթին՝ որ անձրեւէն հաքը գետնին կոնտնչ խօսը կը բուսցնէ : Թէեւ իմ տունն Աստուծոյ քով այսպէս չէ, սակայն ինծի հետ յաւիտենական ուխտ մը ըրաւ, որ ամէն բանի մէջ պատրաստ ու հաստատ է, քանզի իմ բոլոր փրկութիւնս ու իմ բոլոր բաղձանքս այս է, ու պիտի չծաղկեցնէ՞ զայն» : Թագ. 23. 3-5 :

Դալով Արդիային, որ մեր նիւթն է, անոր համետ ու հեղիկ տատուածութիւնը նոյնպէս կը փայլի սրբազան էջին վրայ : Երբ ամբողջ Քառանու երկրին վրայ կը տիրէր անողոք եւ մահասփեւ սով մը, իսկ միւս կողմէն Յեզաբելին մահապաշտէ հարածանքը կար Տէրոջը մարգարէներուն զէմ, Արդիա քաջութիւնը ունեցաւ եւ Մովսէսի նման չվախնալով Յեզաբելին բարկութենէն ջարդի ենթակայ մարգարէները ազատելու, զանոնք յիստուն, յիսուն քարայրներու մէջ պահելով, հացով ու ջուրով կերակրելու : Այդ պատճառաւ Սր. Հոգին վկայելով կ'ըսէր իրեն համար թէ, «Աբդիա Տերոյմէն շաւ կը վախնար» :

Նաեւ ան հեղահամըրոյր եւ խոնարհ էր բնաւորութեամբ : Երբ սովի երեք ու կէս տարիներէն ետքը Արդիա կը կը հանդիպի Եղիային, ինքզինքը ծառայ կ'ընէ անոր ըսելով. «Ես քու ծառադ» : Ի՞նչ խոնարհութիւն, ինքը պալատի մը տեսուչը եւ անտեսն ըլլա-

լով, անտուն ու անպաշտպան եւ մարդկային հայեցակէտով ալ վատարանդի Եղիային առջեւը երեսանկ կը խոնարհի ու կ'ըսէ. «Ես քու ծառադ, ազալութենէս ի վեր Տէրոյմէն կը վախնամ» : Ո՞վ դիտէ տղայութենէն ի վեր ինչպիսի փորձութիւններէ անցու Տէրոջը այս հեղիկ վկան, սակայն ան մեկնուն մէջէն անցած էր յաղթանակի մը պէս եւ փառքած անդրուելի իր տատուածութեան մէջ, արմանի ըլլալու գրաւելու տեղ մը, հաւատքի հերոսներուն ցոնկին մէջ :

Դուն եւ ես ո՞ր տանէն ի վեր Տէրոյմէն կը վախնանք : Ու եթէ Տէրն ալ վաւերացուցած է մեր տատուածութիւնը, ու առած ենք անոր քաղցր համը, ուրեմն ճայնակցելով Սողոմոսեբգուին ցնծութեամբ երգենք ըսելով. «Ալէլուեա, երանի այն մարդուն որ Տէրոյմէն կը վախնայ, ու Անոր պատուիրանքներուն շատ կը հաւնի : Անոր սերունդը զօրաւոր պիտի ըլլայ երկրի վրայ . . . : Աստութիւն ու հարստութիւն պիտի ըլլայ անոր տունը մէջ ու անոր արդարութիւնը յաւիտեան պիտի մնայ» : Լամէն : Քրիստոսի մէկ խոնարհ զինուոր, Տ. Յ. Մ.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՐՎԵՑՆԷԼ

Բարոյական զարգացման հիմը շատ ամրակուռ կ'ըլլայ երբ հնազանդութեան վարժուած է մանուկը : Հոգը մշակած ես եւ կրնաս հոն յաջողութեամբ տնկել ու պտղաւորել մեկն առաքինութիւն :

Սէր հանդէպ ուրիշներուն կամ մարդասիրութիւնն է բարոյականին բո-

վանդակութիւնը: Մարդասիրութեան ինչ ըլլալը բացատրել չատ դիւրին է: Ինչպէս կ'ուզես որ ուրիշներն քեզի ընեն, դուն եւս անոնց այնպէս ըրէ: Մանուկը լաւ կը հասկնայ երբ անոր կ'ըսես. — դուն կ'ուզե՞ս որ քեզի զարնեն ուրիշներ: ուրմն դուն ալ անոնց մի զարներ: Դուն կ'ուզե՞ս որ քոյրիկդ թոյլ տայ որ դուն անոր խաղալիկը գործածես, դուն ալ թոյլ տուր որ ան քուկդ գործածէ երբ կը խնդրէ:

Լոկ բացասական քաղաքավարութիւն մը չէ ուրեմն մեր սորվեցնելիքը: Ուրիշներուն դիւրազգայնութիւններն չվիրաւորելն բաւական չէ ճշմարիտ քաղաքավարութեան համար: Նոյն իսկ այս քաղաքակրթութեամբ Միացեալ Նահանգաց մէջ անկիրթ անձեր կան որ ընկերութեան մէջ բարձրաձայն կը ծիծաղին, ասոր անոր յառած կը նային, իրարու ականջին կը փսփսան: Մենք կ'ուզենք այն բարձր կտրգի քաղաքավարութիւնը որ մարդասիրութեան և մարդայագութեան անկեղծ զգացումներէն կը բղխի: Ըճմարիտ քաղաքավարութիւնը ընկերային առաքինութեանց արատայայտութիւնն է իրօք: Մայր մը կտրող է ամէն ընկերային առաքինութիւն մշտեալ իր պզտիկներուն մէջ քաղաքավարութեան ձեւին ստիկ, որ շատ հրապուրիչ և գործնական ձեւ մ'է: Երբ դիմացինդ իրօք կը սիրես ու կը յարգես, անշուշտ անոր նամակին անյապաղ պատասխան կու տաս, անոր տուած խոստումդ կը կատարես և ժամադրութիւնդ ճշդիւ ի գործ կը դնես, անոր այցելութեան այցելութեամբ և անոր նուէրին շնորհակալութեամբ կամ նուէրով մը կը պատասխանես, անոր դէմ ոչ միայն խժժանք չեղիր բերնէդ այլ զայն կը պաշտպանես երբ ուրիշներ ժպրհին քուներկայութեանդ բամբասել զինքը:

Բարեկիրթ մայրերը իրենց պզտիկներուն խրատ կու տան որ եթէ իրենց այցելող հիւրերէն մէկը բամբասական խօսք մը բարբառնջել սկսի իրինց ուրիշ մէկ բարեկամին վրայ, անմիջապէս ընդմիջեն քաղաքավար դիտողութեամբ մը, զոր օրինակ. «Ես մայրիկին բոլոր բարեկամները կը սիրեմ»: Այսպիսի յայտարարութիւն մը բաւական է կապել, կարկամել բամբասող բերանը:

Կան նաեւ անբարեկիրթ մայրեր, դժբաղդաբար, որ գէշ օրինակ կու տան իրենց պզտիկներուն՝ ուրիշներ բամբասելով ու ծաղրելով: Հրաւերէ մը վերադարձին՝ մայր մը կ'սկսի իր պզտիկներուն բարբառնջել և ըսել. «մեզայ, խորովածը այրած էր, փիլաֆը ոռքը փակեր էր, մածունը անանկ թթու, չես կրնար բերանդ դպցնել... Փայլակին չըջագգեստը սարսափելի էր... խոհարարուհին ալ ո՛րքան գիրցեր է, մէջքէն պտրան մը կապած ցորենի մեծ պարկի մը կը նմանի» և բոն բին բուն ու փոս փիս քուս, ու ծիծաղելէն կը մարին: Ուրիշ մայր մը, ճիշդ նոյն պտրազայից մէջ, ոչ միայն քննադատական ու եւ է բոն մ'իսկ շարտասաներ, այլ մանաւանդ իր պզտիկներուն մատածութիւնը կը հրաւիրէ ամէն այն լաւ քաներուն վրայ՝ զո՞քս տեսած էր իր սուր աչքով. կը գովէ Փայլակին աղւոր վարմունքը և հիացում կը յայտնէ, «տուսը տարեկան աղջնակէ մը այդքան կրթութիւն չէի սպասեր» կ'ըսէ: Ասոնք լսելով՝ պզտիկները աւելի կը սիրեն այն անձերը որոնց այցելած էին, աւելի կը ջանան անոնց պէս նրբավար ըլլալ, և իրենց մօրը վրայ ալ բարձր համարումնին աւելի եւս կը բարձրանայ:

(Շարունակելի)



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ԺՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Հետեւեալ պատմութիւնը ցոյց կուտայ՝ որ ճշմարտութեան համար զօրաւոր վկայութիւն մըն է քրիստոնեաներու կեանքը: Չնայած որ անհաւատներ կը հակառակին քրիստոնեաներու, իրենց սրտին խորունկ տեղերը հաւատք կ'ընծայեն Աստուծոյ զաւակներուն: Անոնք չեն ուզեր Աստուծոյ դառնալ, կը շարունակեն մեղքի մէջ ապրիլ քրիստոնեաներու հակառակիլ, բայց և այնպէս նեղութեան պահուն Աստուծոյ զաւակներուն կը դիմեն, անոնցմէ օգնութիւն կ'սպասեն և անոնց վրայ յոյսերնին կը դնեն: Այս պարագան յաճախ անոնց արթննալուն և փրկուելուն պատճառ կ'ըլլայ:

Շնորհալի երիտասարդ մը՝ Մ. Նա. հանգնելու Վերձինիս քաղաքին դրամատուներէն մէկուն մէջ, առաջին հաշուակալի պաշտօնը ունէր: Սակայն անհաւատ ընկերներ սենէր, և անոնց չար ընկերակցութիւնը իր մէջէն սրբած էր ամէն քրիստոնէական հաւատք որուն մէջ մեծցուցած էր իր աստուածապաշտ մայրը:

Օր մը դրամատունը իրեն յանձնեց խոշոր գումար մը ուրիշ մէկ քաղաք տանելու: Այդ տաննիւրը երկաթուղիով ճամբայ չկար, բայց աստի ճամբան վտանգաւոր էր աւազակներու պատճառաւ: Ասոր համար այնպէս կարգադրեց որ ցորեկները միայն ճամբորդէ: Ան իր ճամբան կորսնցուց

և բաւական ասդին անդին թափառելէն ետքը մտահոգուիլ սկսաւ, ուրախ պիտի ըլլար եթէ ապաստան մը գտնէր որպէսզի հոկտեմբերի ցուրտ գիշերը դուրսը անցնելու չստիպուէր: Մտեցաւ խրճիթի մը՝ որ իր ճամբուն մօտ անտառի մը ծայրը կը գտնուէր, զարկաւ դուռը զոր բացաւ կին մը և զինքը ներս հրամցուց: Խնդրեց որ այդ գիշերը իրենց հետ անցնէ: Նա ըսաւ որ ինքը և տղաքը ասն մէջ մինակ են, ամուսինը որսի գացած ըլլալով: Իր հիւրին տօջեւ դրաւ երեկոյեան ճաշը, և մտքուր անկողին մը պատրաստելով խնդրեց որ քնանայ և հանգստանայ: Սակայն երիտասարդը չճամբակեցաւ, ան կը վախնար որ չըլլայ թէ ամբողջ երկրին մէջ սարսափ պատճառող մարդոցմէ մէկուն տունը իջեւանած ըլլայ, անոր համար որոշեց ամբողջ գիշերը արթուն հսկել որպէսզի ի պահանջել հարկին մինչեւ վերջին չունչը պաշտպանէ իրեն յանձնուած գումարը:

Ժամ մը ետքը տանտէրը կը վերադառնայ: Անիկա ահովի և ուժեղ մարդ մըն էր, դաժան տեսքով: Ան յոգնած կը թուէր, կարճ կերպով բարեւելէ ետքը օտարականը, կը նստի իր ընթրիքը ընելու: Ան ալ հիւրին տաքարկեց քնանալ, սակայն ան վստահացուց թէ փափաք ունի ամբողջ գիշերը կրակին առջեւը նստած անցնելու: Մեծ երկիւղի և վախի

մէջ էր, կը խորհէր թէ ասիկա իր վերջին գիշերը կրնայ ըլլալ: Երբ որեւէ կը ծագէր իր ճամբուն վրայ և ո՛չ մէկ վտանգ չէր երեւնար այն տանները իր անհաւատութեանը մէջ ինքզինքը շատ զօրաւոր և քով կը զգար, բայց հիմա այս նեղութեան և վտանգի պահուն այդ անհաւատութիւնը իրեն մխիթարութիւն չէր կրնար տալ: Երկիւղը հեռզհեռէ խիստ կը մեծնար:

Վերջապէս տանտէրը կ'աւարտէ իր ընթրիքը: Յետոյ ոտքի ելլելով դարակէն հանելով մեծ Սբ. Գիրք մը՝ կ'ըսէ. «Պարոն, եթէ դուք չէք ուզեր քնանալ, ես կ'ուզեմ, բայց մենք սովոր ենք քնանալէն առաջ միասին Աստուծոյ խօսքը կարդալու և մենք զմեզ Աստուծոյ պաշտպանութեան յանձնելու»:

Այս խօսքերը երբ կը լսէ, անհաւատին սրտին մէջէն բոլոր վախը կ'անհետանայ: Ան լու գիտէր որ Սբ. Գիրք ունեցող, զայն կարդացող և Աստուծոյ առջեւ ծունկ խոնարհող մարդը երբեք կարող չէ իր կեանքին կամ իր ունեցածին վնաս հասցնել: Ուշադրութեամբ մտիկ ըրաւ Աստուծոյ խօսքը որ կը կարդացուէր, և երբ ընտանիքը աղօթքի համար ծնրողքեց, ինքն ալ ծունկի եկաւ: Պարզ մարդու ջերմեանդ աղուչանքը առ Աստուած, որպէսզի այդ գիշեր հովանաւորէ և պաշտպանէ զիրենք, երիտասարդին սրտին խորը մխրճուեցաւ: Երկիւղի ամէն մէկ նշոյլ անյայտացաւ: Բոլորովին ապահով անկողին մտաւ և շատ հանգիստ քնացաւ, կարծես իր հօրը տունը ըլլար:

Այն օրէն յետոյ երբեք լսուած չէ որ այս երիտասարդը Սբ. գիրքի և Աստուծոյ զուականերուն զէմ բան մը խօսի: Ան իր չար և անհաւատ ընկերներու հետ իր յարաբերութիւնը

խզեց, և այժմ տարիներէ ի վեր ճշմարիտ քրիստոնեայ մըն է:

«Թող լուսաւորէ ձեր յոյսը մարդոց առջեւ, որ տեսնեն ձեր բարի գործերը, ու փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է» (Մատթ. 5. 16):

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— Ի՞նչ է նշանակութիւնը Յակ. 4. 11 ին: Ինչպիսի կարեղի կ'ըլլայ օրհնիք դասեղ, եւ ո՞ր օրհնիքն մնաին կը խօսի առաջնայր:

Պատ.— Առաջնայր կը խօսի շեզուի գործածութեան խնդրոյն վրայ, որուն յոռի գործածութիւնէն կը ծագի ամէն երեւակայեղի չարիք: Եւ ասիկա սէր յարաբերութիւն ունի ֆրիստնեայի մը հոգեւոր վիճակին հետ: Այս Օրհնիք որուն մնաին կը խօսի առաջնայր Դ. Բ. 8 ին մէջ «Արքունական Օրհնիք» ըսուած է, որ է «Քու ընկերդ սիրեա քու անձիդ պէս»: Իր եղբայրը քանքատող, դասող ու դասափէտողին արարքը ո՛չ քի սոյն «Արքունական օրհնիք»ին դիմ է, այլ դասապարտէ է քուն իսկ օրհնիք իրեւ հնազանդութեան անարժան օրհնիք մը: Եւ այդ կերպով դասեղ կ'ըլլայ օրհնիք որպէս դասաւոր: Այս յոյսով նայեցե՛ք հաւարին եւ դժուարութիւնը կ'անհետանայ:

Հարց.— Մեղեմը երախաները կը կորսուի՞ն:

Պատ.— Ոչ. արդարեւ անոնք ի ծնէ կը ժառանգեն մեղանշանի քնութիւն մը (Եփես. 2. 3), ասիայէն երբ մեղինն նախ քան կարող ըլլան քարին եւ չարը զանազանեղաւ, անոնք պատասխանատու չեն ըլլար անոր համար: Տե՛րք իր փառութեան մէջ նկատի առած է «ստացւելէ գործուած մեղքերը» (Հն. 3. 15): Անոնք Քրիստոսէ կը ժառանգեն վերաքիւն այնքան որոշ որքան կը ժառանգեն մեղքը Ադամէն (Հն. 5. 19-21):

ՊԱՂՉԵՏԷ ՊԻՐ ԳԱՊՐ

(ՅՈՒՂ. 19. 41)

Այլոհ նէ զէման պու տիւնեայր խալգ էթտի իսէ անքն իշինտէ պաղչէ տէ եափտը, լաքին օրատա մէզար եօգ իտի: Պաղչէ վէ գապր եէկտիկէրինէ զըտա շէյլէր տիր: Պաղչէ հայաթ իմա՛ էտէր, գապր՝ էօլիւմ: Պաղչէտէքի նէ-վանէվ ողաճլար, լէնկեարէնկ չիէք-լէր ինսանըն գալլայինի ֆէրահլանտը-րան շէյլէր տիր, օրայա կիսէրիգ սեվկիւլիւկերիմիգ վէ souբլարմըզլի մեսուր օլմագ իշին: Մէզար իսէ չըփ-լագ վէ սողազ եիւզիւլէ ինսանըն գալլայինէ խաֆֆ ու տէնչէթ պրազըր, օրայա կիսէրիգ պիզսէն ալըլմըզ սեվ-կիւլիւկերիմիգ վէ souբլարմըզ օլա-յըսըլի աղլամագ վէ մաթեմ եքմեք իշին: Պաղչէ՞, էվվէթ տնը ճիւմէմիգ սէվէրիգ վէ տնը հէր եէրտէ կէօրմէք իսթէրիգ: Մէզար, օ՛հ անալն քի՞մ խօշլանըր, պիզտէն տնը տաիմա ուզագ կէօրմէք իսթէրիգ, օ մուճիպի տէն-չէթ շէյ.տիր: Պաղչէ պիզի ճէզպ է-տէր, գապր պիզի քէնտինտէն ուզագ-լաշտըրըր:

Փագաթ պու տիւնեատա ճիւմէ-միզին տէ հիսսէսի պու տըր: Պաղչէ վէ մէզար եան եանա տըրլար: Մէ-սէրրէթին եանընտա՝ քէտէր, թաթ-լընըն եանընտա՝ տնը, կիւլլէշին եա-նընտա ֆիզան, նուրըն եանընտա՝ զուլմէթ, հայաթըն եանընտա՝ էօլիւմ վար: Պաղչէր եէքտիկէրինէ զըտա տըրլար, ֆագաթ մէվճուտ տըրլար: Ա՛հ, պաղչէսէ պիր գապր:

Էօլիւմ պիր վագա՛ա սըր, չիւնֆի հէր քարաճսա մեզար վար: Սարը աթ վէ տնա րաքիպ օլան էօլիւմ քէսկին օրաղընը հէր իտարաֆա սալտըրըպ պիւլէրճէ սէնչէրտէն պէրրի ինսաթ-սըզճաւընա հայաթ պիշիօր (օ հալա գանլը գըլըճընը գընընա գօյմամը:

տըր) վէ պու տիւնեանըն եիւզիւնիւ գապրլարլէ սօլտուրուօր: Օ մասու-մը վալիտէսինտէն գափըյօր, փէտէրի՝ էվլտաւընտան ալըրըպ տնլէրի եաա ու մաթէմ իշինտէ թէրք էտիօր: Նէ հէյպէթլի շէյ, ճէննէթ կիպի եարա-տըլան պու տիւնեա էնճամ պիհու-տուտ գապրիսթանա՞ մը թէհալվիւլ էտէճէք: Պաղչէլէրի պօզուպ մէզար-լըզա՞ մը թանվիլ էտէլիմ: Եօգ մը տիւնեանըն քէօչէսինտէ էօլլէ պիր մահալ քի օրատա գապր օլմասըն: Էյվա՛հ, կիւնա Վասըթասըլլէ պու տիւնեայա էօլիւմ կիրտի, վէ տնըն վասըթասըլլէտէ Լօլիւմ ճիւմիկ ին-սանլարա կէշի, վէ օ միւսթագիլ սուրէթտէ սալթանաթ էտիպ հէր թու-րաֆը գուրու քէմիքլէր օլմասընա տէօնտէրիօր: Պիհիսապ քիմսէլէր եէր ալթընտա Հասէս տէնիլէն սթասեօնտա սօն պօրուըն չալընմասընա միւնթա-զըր տըրլար: Պաղչէլէր գապրլար իլէ սօլու տըր, տիւնեանըն հէր թարա-ֆընտա պու պիր միւլէլլէմ վագա՛ա տըր: Պաղչէսէ պիր գապր:

Ֆագաթ համս օլսուն ֆի պու գապր պաղչէսէ սիր: Պաղչէտէ գապր մուճիպ ի էլէմ-վէ ֆիթուրա սէպէպ տիր, էօ-լիւմին հայաթ իւզէրինէ միւսթագիլ հիւքմիւնէ ա՛լամէթ տիր: Տիկէր թա-րաֆտա գապրըն պաղչէտէ օլմասը պէօյիւք թէսէլլի վէ իւմիտ սէպէպի տիր, հայաթըն էնճամ էօլիւմ իւզէ-րինէ օլան գաթի զալէպէսինէ նիշան տըր: Զիւնքի հայաթըն րէիսի պաղ-չէտէ էօլիւմ իլէ ա՛լիմ պիր ճէնկ եափմը վէ տնը ֆէնա սուրէթտէ մաղլուպ գըլմըշ տըր: Իլք ճէնկ էտէն պաղչէսինտէ վուզու պուլտու, օրա-տա էօլիւմ հայաթ իւզէրինէ զալէպէ չալտը վէ պաղչէտէ գապր էյտի: Ի-քինճի ճէնկ Դիթսէմանի պաղչէսին-տէ վուզու պուլտը, պուլտա Յիսուս էօլիւմ իւզէրինէ աղիմ ֆիւթիւհաթ

չալտը վէ պողչէտէքի գապը պօ-
չալթաը վէ օրատա հաքիմանէ կէզտի
«Մարիամ անը պողչէպան զանն էթ-
տի», օհ, նէ՛ ճէլիլ պիր Պողչէպան:

Իշթէ Զատիկին հագիգի մանու-
սը. էօլիւմ՝ պիլճիւմլէ պողչէլէրի մէ-
զարլըզա տէօնաէրմի: Իքէն, Յիսու-
սըն ճէլիլ գըլամը հէփ մէզարլըգլարը
պողչէլէրէ տէօնաէրմի: օլտու: Պոռն-
տան սօնրապողչէտէ պիր գապը հէփ
պողչէլէրին մէզարիսթանա թէպէտ-
տիւլ էթմէսի մանասընը վէրմէզ,
չիւնքի Յիսուս Բէնտի գըլամըլլէ ի-
լան էթտի քի հէփ մէզարլըգլար ի-
չինաէ գապը պոլլուհմայան պողչէ-
լէրէ տէօնէճէքլէր: Օրատա չիչէքլէր
սալա սօլմազ, մէլլէտար տղաճար
հէր ալ մէլլէ վէրիւր, տիրի սուլար
հէր թարաֆտա չաղլայտրազ տգար-
լար, նուրու տիւքէնմէզ, վազթը էօլ-
չիւլմէզ: Ահ, պիր պաղչէ քի օրատա
էօլիւմ վէ գապը իւզէրիքն ղալիպէ
չալընմը քր:

Դապըսըզ պաղչէ. — Պիզ մէզար-
լարը զիյարէթ էտէրիզ, չիւնքի պիզ-
տէն ալըլմըլ սէվկիւլիւլէրիմիգին
ճէսէտլէրի օրատա տըր: Ֆազաթ պիր
մէզար վար տըր քի, օ պիզիմ իչին
տահա գըլմէթլի տիր ճէսէտին օրա-
տա օլմամասը իչիւն: Օ էֆէնտիմի-
ղին պօշ մէզարը տըր, սէվինիլիզ քի
Օ օրատա տէլիլ տիր: Օրատը Բապը-
մըզ Յիսուս Բիրստա վասըթասըլա
գապըսըզ պիր պողչէ օլտու, վէ պոռն-
տան սօնրա պիզիմ իչիւն հազըրլանա-
նան պաղչէնին օնուհ կիպի մէզար-
սըզ օլտաղընա տէլալէթ էտէր:

Պիր տէֆա կէնճ գըզըն պիրիսի
պողչէտէ կէզեր, օրատաքի խօշ րաի-
հալը չիչէքլէրի, էօթէն գուչլարըն
նաղմէլէրինի, թէմիզ հալտը, պէր-
րազ կիւնէչի կէօնէնի իքէն մէսէրէ-
թինաէն թէրէնիւմէ պաշլար: Թէ-
րէնիւմ էթտիյի սըրատա ափանսըզ

աղըր պիր մատտէ պաշը իւզէրինէ
աիւչէրէք պիհիսս հէրէ սէրիլիլ: Ա-
յըզաղընտա կէօրիւլիւր քի գուլվէի
հաֆըզէսինի ղայպ էթմիլ տիր: Թէ-
տալի էտիլիլ ֆազաթ ֆայաէսիզ:
Հէքիմլէր տէրլէր քի տնճազ պաշգա
պիր սարաըլըլ՝ ղայպ էթտիյինի իտ-
տէ էտէպիլիլ: Սէնէլէր սօնրա օ սար-
սըլըլ վուգու պուլուր, օհ նէ պիր
միւճիզէ, գուլվէի հաֆըզէսի կէրի
կէլիլ, վէ պողչէտէ գազա վուգու
պուլտուղունտա թէրէնիւմիւ նէրէ-
տէ պրազտը իսէ օրատան կէրի թէ-
րէնիւմէ պաշլար:

Պու նազլիյէթ տալմին թարիսի
տիր: Պիր վազըթ վար իտի քի տալմ
պողչէտէ կիւնահաղ պիր հալտէ մա-
րուր վէ էօմիւ թէրէնիւմ իտի:
Կիւնահըն աղըր տարպէսի էնտի վէ
հէր չէլի ղայպ էթտի: Յիսուս Բիրս-
տա իլէ ղայպ էթտիյինի տալմ կէրի
պուլտու: — Էօլիւմսիզ պիր տիյար,
մէզադըսըզ պիր պաղչէ, հալիլտու:
Բիրստա հալաքսան գըլամ էքիլիէ քիր:

Խ. Թ. Ս.

ՅԻԻՔՍՏԱՐ ՎԷ ՊԵՆՏԵԼԵՐԻ

«Վէ հիւմսարլըզ սէլահիյէքինի
«ալլալ՝ տլէթ էքսիյիցէ, քիմից ցէ
«քիցաւէթ էքսիյիցի պիլմիլ իչիւն
«ազչէլի վիւլի օլտուր պլցէլէրի-
«ցին քլցի եսընմա չաղըլմասընը
«էմը էքսի»: Ղուկ. 19. 15»

Ղուկ. 19 լնճը պապտա Բապը-
մըզըն Նազլ էթտիյի միտալ չօզլարը-
մըզա մալլւմ տիր: օրատա կէօսթէրի-
լէն Ոսըլգատէ ղուրպէթտէն հիւքմ-
տարլըզ սէլահիյէթի իլէ սվտէթ է-
սէլէք, մըլտալըլ պէրալիլ քիմսէ-
լէրտէն հիտապ տրատըզ կիպի, Բապ
Յիսուս տալիլ քէնտինիւմէրէ վիւ-
տիյի մընալարըն հիտապընը թէքրար

կէլիշինտէ միւմինէրտէն թալէպ է-
տէճէք տիր: Պիր զէման Ասըլատտէ
տիւնհատա իտի, Ֆազիր վէ մէթրուք
վէ պաշընը գոյաճադ եէրի եօգ իտի,
թիւքիւէրին ինլէրի վէ հավա գուշ-
լարընըն եուվարարը վար իտի, ամմա
պու Ասըլատտէնին պաշընը գոյաճադ
եէրի եօգ իտի: Ամմա օ՝ հիւքմաար-
լըգ սէլահիյէթինի տլըպ տվտէթ էթ-
մէք իւզըրէ սէմավաթա, Փէտէրինին
եանընա կիթտի, ող սօնրա օ կէրի
կէլէճէք, վէ հէր քիմէ մընալար վէր-
տի իսէ հիսապ իսթէյէճէք տիր:

«Ձիրա իպն իւլ ինսան քէնտի
մէլէքլէրի իլէ Փէտէրինին ճէլալինտէ
կէլէճէք, վէ օ զէման հէր քէսէ ամէ-
լինէ կէօրէ միւքհաֆաթ էտէճէք տիր»
(Մատթ. 16. 21):

Օլ զէման մընալարընը իսթիմալ
էտէնլէր միւքհաֆաթա, կիզլէյէն-
լէր իսէ միւճադաթա նախ օլաճադ
աըրլար:

Պիլմէլի իզ քի հէր պիր միւմի-
նին մընասը վար, մընասը օլմալան
հիշ պիր միւմին եօգ աըր: Ֆարգ, մը-
նայը իսթիմալ էտիպ էթմէմէքտէ տիր:

Աճէպա Րապպըմըզ Յիսուս Քրիս-
տոսուն սէմավաթտան կէլմէքտէ օլան
Ասըլատտէ՝ հիւքմաարըն պիզէ վէր-
տիյի մընալար հանկըլար տրի:

1. Մուհապպէթ մընասը.

Հէր խէլաս պուլան միւմինին
գալպինէ խաշըն մուհապպէթի իզհար
օլունմուշ աըր, վէ օ մուհապպէթ ի-
չինտէ եիւրիւյէն միւմին Ալլահընը
պիւթիւն գալպտէն սէվէր, վէ Ալլա-
հըն էվլաալարընը խալիս մուհապ-
պէթ իլէ, ըիյասըզ վէ հագիգի մու-
հապպէթլէ սէվէր: Քրիստոսուն գալ-
պիմըզէ քէշֆ էտիպ վէրտիյի մու-
հապպէթ մընասընը նասըլ վէ նէ գա-
տար իսթիմալ էթմէքտէ իզ՝ Օլ մու-
հապպէթ իչինտէ եիւրիւյէն միւմին-
լէր, տիւշմէնլէրինի սէվէրլէր, քէն-

տիւէրէ պուզղ էտէնլէր իչիւն խայր
տուա էտէրլէր, իշթէ պու աըր մու-
հապպէթ մընասընը իսթիմալ էթմէք:
Պու մընայը իսթիմալ էտիյօ՞րմըլըզ:

2. Իման մընասը.

Հէր միւմին իման վասըթասըլա
ինայէթտէն խէլաս պուլմուշ աըր: Ի-
ման տիւիյէսինէ նախ օլանլար, էօմ-
րիւն սաիր ճիւմլէ տիւլալընտա, թէճ-
րիպէ վէ մուգայագալարտա վէ թէհ-
լիքէլէրտէ Րապպա կիւվէնէրէք իման
իլէ եիւրիւյէրէք, քէնտինէ ինսան վէ
էմանէթ օլունտան իման մընասընը իս-
թիմալ էթմէլի տիր, թաքի Ասըլա-
տէ հիւքմաար կէլտիյինտէ մընալա-
րմըզը իսթիմալ օլունմուշ պուլսուն:

3. Թէվազու մընասը.

Թէվազու հայաթը թէվպէ էտէն
պիր միւմինտէ պալար, վէ պու էօմր-
տէ քէլամ իլէ վէ Րուհտան թալիմ օ-
լարագ կիւնտէն կիւնէ նէշվ ու նէմա
պուլուր իսէ, էօյլէսի պիր միւմին
թէտրիճէն ինլասքետընա պէնզէր օ-
լուր: Րապպըմըզ պունուն իչիւն պու-
լուրտու քի՝ «Պանա պագընըզ վէ
պէնտէն էօյրէնինիզ, չիւնքի պէն հա-
լիմ վէ գալպէն միւթէվազը իմ . . . »:

Յիսուսա պագարագ, Անտէն էօյ-
րէնէն պիր միւմին միւթէվազը պի-
րիսի տիր: Ինլասքետընա պէնզէր օ-
լան պիրիսի տիր:

Յիսուսա պէնզէյէն միւմին քէն-
տինէ պուզղ էտէնլէր իչիւն տուա է-
տէպիլիր, տիւշմէնլէրինի սէվէ պի-
լիր, հագընտան վազ կէշէպիլիր, հա-
գարէթէ սիւքիւթ էտէպիլիր, մուգա-
պէլէ ի պիլ միսլ էթմէքտէն գալար:

Էյ սէվկիլ իւ օգույան, սէն՝ թէ-
վազու, իման վէ մուհապպէթ մընա-
լարընը իսթիմալ էտէն պիրիսիմիսին:

Ասըլատտէ հիւքմաար տվտէթին-
տէ սէնի նէ՝ հալտէ պուլաճադ:

ՍՈՆՐԱՍ ԱՄԻՐԱԼԵԱՆ

Malden Mass

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԺԽԱՐՀԷ

Հիլլեր եւ Նիլսոլլըր.— Անգլիական շաքաքերք մը Լուսերական եկեղեցուն պատկանող գերմանացի եկեղեցականի մը՝ Հիլլերի եւ Նիլսոլլըրի մասին ըրած հետեւեալ հետաքրքրական զուգակշիռը կը հրատարակէ.

— «Գերմանիա, ըսած է ան, ունի երկու հոշակաւոր մարդ — Հիլլեր եւ Նիլսոլլըր: Անոնց աշխարհը բաւական ըստ չի պարունակելու այս երկու դիւմբը: Երկուքն ալ միեւնոյն տարիք ունին, երկուքն ալ պատերազմի մասնակցած են մեծ պատերազմի տակ: Ազգ. Ընկերակցութեան սկիզբի օրերուն երկուքն ալ քով քովի կեցած են միեւնոյն իսկուայի համար, այսինքն Գերմանիան տեսնել ազատ եւ երջանիկ: Այսօր անոնք կը ներկայացնեն բոլորովին տարբեր դասանակ: Ի՞նչ են անոնք.— Հիլլեր կը կենայ մարդուն մէջ ամենատարին բընագոյններուն համար, որոնք են բիւրս ուժ, նուաճողականութիւն, ասկութիւն, հարստանք, ճնշում եւ պատերազմ: Եւստիլլըր կը կենայ Աւստրոյ խօսքին համար, որպէսզի ան նուաճէ մարդոց սրտերը: Նիլսոլլըր կեդրոնացման կայան նկատած է, որովհետեւ Սեր կը փառքի, իսկ Հիլլեր՝ Ուժ: Յետոյ որովհետեւ ան հետեւեցաւ Յիւսուսի եւ ոչ թէ Ասոլլֆ Հիլլերի»:

§ Գերմանիոյ բողոքական երեցներուն 40 առ հարիւրը, իսկ Գաղղիոյ բող երեցներուն աւելի քան 55 առ հարիւրը զօրաշարժի ենթարկուած են: Յետոյ այս երկու պատերազմի երկիրներուն պատկանող միախոնարներուն կիսին աւելին զենքի տակ են: Թրանսայի մէջ երկու երեցներ զօրակոչի հրահրին չեն անտած, պատերազմը հակառակ զենքով փրկանակութեան, այսպէս ըրած են Ճարմի եւ Անգլիոյ մէջ ալ կարգ մը քա-

րոզիչներ: Անգլիոյ մէջ կը խորհին տարբեր կարգադրութիւն ընել այդպիսիներուն համար, իսկ Գրամսոյ փառքիչներ քանակ են եւ մօտեւս պիտի դառնան:

§ Եւս մը տեղեր բողոքական եկեղեցիներու կառութիւնը զիջ է, պատերազմի տարիք, ասիայն փառքերական է ընել՝ որ մօտեւս Պոլսաքնէքի մէջ, Հունգարիա, տեղի ունեցող եկեղեցական մեծ համագումարին ներկայ եղած է 30 հազար հոգի, որոնց համար կառավարութիւնը յատկացուցած էր 17 մասնաւոր կառուար, նոյնպէս ներկայ եղած են 25 հազար մանուկներ՝ պատանիներու մասին մէջ: Ասիկա կը նշանակէ հունկար բողոքականութեան կենտրոնականները հաւել հաւատարմութիւնը բարեկարգեալ եկեղեցիներուն համոյիս:

§ Ռուսիոյ տրապետութիւնը Էսթոնիոյ եւ Լատվիայի մէջ մտնողութիւններ կը պատճառէ բողոքական բնակչութեանց համար: Էսթոնիոյ մէջ բնակչութեան 78 առ հարիւրը, իսկ Լատվիայի մէջ՝ 57 առ հարիւրը կը կազմեն բողոքականութիւնը, կ'ըսէ «Հերոլտ ալ Հօշիկու» թերթը:

§ Միաց. Նահանգներու հախազանին Վաշինգտոնի մօտ անձնական ներկայացուցիչ մը որկելուն տարիք Միքսցականներն ու Լուսերականները կրակ կը տրած են կ'ըսէ միեւնոյն թերթը, եւ յետոյ կ'աւելցին՝ թէ իւրաքանչիւր բողոքական յարանձանութիւնը Պետերիկայի մէջ, պիտի է մեկ նման արտայայտութեան մը:

§ Փոլոնիոյ Գերմանիոյ կողմէ նուաճուած շրջանին մէջ Միաց. Աւետ. եկեղեցիին պատկանող 12 փառքիչներ սպաննուած, եւ 69 հոգի ալ ձերբակալուած եւ քանտարկուած են, կ'ըսէ ամերիկեան թերթ մը:

ՏԻՐՈՒՆԻ

Թերթը մամուլի տակ էր երբ սրտի խոր վշտով մը ի-
մացանք դառնադէտ մահը՝

ԵՂԲ. Թ. ՆԱՅԱԹԻԻ

որ տեղի ունեցաւ 9 Մարտ առաւելան ժամը 4 ին

«Աւետարանի Ձայն»-ը իր ցաւակցութիւնը կը յայտնէ
իր սգակիր պարագաներուն:

Յառաջիկային կ'անդրադառնանք իր կենսագրական գիծերուն:

ՆՈՒՅՆԱՅՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Պէյրուսի Տիկնանց ժողովը «Համաշխարհային Աղօթքի Օր»ունան առ-
քիւ հանգանակութիւն մը բրտմ եւ արդիւնք յաշկացուցած է մէյմէկ տարուան
երկու «Աւետարանի Ձայն» նուիրելու, որոնցմէ մէկը՝ Ազունիյէ Սգգ. Բուժա-
րանին, իսկ միւսը՝ Համամանայի հիւժախտաւորաց յատուկ բուժարանին:

Մեզի անխառն հաճոյք պատճառած է մեր բոյրերուն սոյն համակրալից
արտայայտութիւնը քերթիս հանդէպ, եւ որքան գեղեցիկ նպատակի մը համար:

Մի ունե, մէկ տարուան «Աւետարանի Ձայն» կը նուիրէ Պր. Խաչիկ
Թաւեանին, Զէյթուն:

Արաֆի Զպուգնեան 10 Ն. Դ. կը նուիրէ «Աւետարանի Ձայն»ի Դոնսին
ուրախադիր դէպքի մը առթիւ:

Մեր շնորհակալութիւնները նուիրատուներուն:

Եւրամանչիւր փրկուած հոգի (եթէ ինքն ալ բնացած չէ) քե' քարոզիչ
եւ քե պարզ անհաս, չկրնար չմտաւորուիլ երբ տեսնէ քե տարիներ կ'անցնին
հոգիներ պարձի չեն գար, հոգեւոր շարժում մը չերեւար հոգեւոր արջառակե-
րու մէջ: Ընդհակառակը ամէն ինչ ձեւական դարձած է, եկեղեցիներու մէջ
իսկ աշխարհասիրութեան ձգտում կայ: Սակայն ամէն բան պատճառի մը ար-
դիւնքն է: Կարդա՛ «Արքնութիւններ եւ Աղօթք» գրքիկը, հոն արքնութեանց
փորձառութիւն ստացած մէկու մը կողմէ կը մասնացնուին պատճառները. քե-
լադրութիւններ կ'ըլլան, արքնութեանց բազում հետաքրքրական օրինակներ կը
տեսնեն: Ձայն կարդալով ընթերցողը պիտի նշմարէ իր անձնական կեանքի
քերութիւններն ալ, մանաւանդ աղօթքի կեանքին մէջ, եւ պիտի զգայ անհրա-
ժեշտութիւնը Սբ. Հոգիով լեցուելուն: Կը բաղկանայ 80 էջերէ, Գինն է 5 Ն. Դ.

ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐ ՄԻՋՆՈՐԴԸ, 304 էջ,

Գին՝ 10 Ն. Դ., Սուրիա՝ 10 Դրամ, Ամերիկա՝ 75 Սենթ

Սոյն հոգեւորնէ գիրքին համար դիմե՛ք հեղինակին՝

Rev. THEODORE Y. DAGHLIAN

Armenian Evangelical Church

American Mission Building — CAIRO, Egypt.

ՈՒՇԱԳԻՐՈՒԹԻՒՆ.— Բոլոր դրամական առաքումներ, յօդուածներ եւ
թղթակցութիւններ պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով.—

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen — Shoubra, CAIRO (Egypt).

Habib Mansour Press — 3, Haret El Zahar (Opposite the Shepherd's Hotel), Cairo